




ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՀՈՐԻԶՈՆ

ՅԱԽԵԼՈՒԱԾ «ՀՈՐԻԶՈՆ» ՇԱՐԱԹԱԹԵՐԹԻ

Ապրիլ 2025

ՄԵՐ ԽՕՍՔԸ



Անմոռանալի թուական մըն է Ապրիլ 24-ը:

Աշխարհի տարածքին ամէն տեղ, ուր հայեր կան, անպայման կը համախմբուին ոգեկոչելու համար Հայոց Յեղասպանութեան յիշատակը: Այդ համախմբումները յաճախ տեղի կ'ունենան 1915-ի նահատակներուն նուիրուած յուշակոթողի մը շուրջ:

Հոն ներկայ կ'ըլլան հայ պատանիներ, երիտասարդներ, չափահասներ եւ տարեցներ: Ներկայ կ'ըլլան հաստատելու, որ իրենք կը մնան հաւատարիմ իրենց պապերու ուխտին եւ իրենց ներկայութեամբ, կոչերով, երգերով եւ ասմունքներով կու գան ցոյց տալու աշխարհին, թէ հայը կայ եւ կը մնայ պահանջատէր իր իրաւունքներուն:

Դուն ալ, սիրելի աշակերտ, լաւ սորվէ քու ժողովուրդիդ պատմութիւնը: Տես, թէ ինչպէ՛ս ջարդ, սով ու չարչարանք տեսած հայը, սիրած է կեանքը, պայքարած է, արձանագրած է յաղթանակներ եւ կատարած է բազմաթիւ ստեղծագործութիւններ:

Յիշէ՛ անցեալդ, որ ճիշդ ձեւով կերտես ապագադ եւ տէր ըլլաս քու բոլոր իրաւունքներուդ:

ԾԻԾԵՆԱԿԱՔԵՐԴ



Ամէն տարի Ապրիլ 24-ին, հարիւր հազարաւոր հայեր կ'ուղղուին դէպի Ծիծեռնակաբերդ, իրենց յարգանքի տուրքը մատուցելու Յեղասպանութեան մէկուկէս միլիոն զոհերու յիշատակին:

Ծիծեռնակաբերդը, որ կը կոչուի նաեւ Հայոց Յ ե ղ ա ս պ ա ն ո թ ե ա ն յուշահամալիր, կը գտնուի Հայաստանի մայրաքաղաք

Երեւանի մէջ, Հրազդան գետի երկայնքին, բարձրունքի մը վրայ: Անոր շինութիւնը սկսած է 1966-ին եւ աւարտած է Նոյեմբեր 1967-ին: Ծարտարապետներն էին Արթուր Թարխանեան եւ Սաշուր Քալաշեան. իսկ ճարտարապետական խմբի ղեկավարն էր քանդակագործ, նկարիչ, ճարտարապետ, բանաստեղծ եւ գիտնական Վան Խաչատուրը:

Ծիծեռնակաբերդը կը բաղկանայ երեք հիմնական կառոյցներէ:

- ա) 44 մէթր սիւնը, որ կը խորհրդանշէ հայ ժողովուրդի վերածնունդը:
- բ) Յաւերժութեան տաճարը, որ կազմուած է 12 հսկայ քարէ սալիկներէ: Այդ 12 սալիկները կը ներկայացնեն հայկական 12 մեծ նահանգները, որոնք ցեղասպանութեան ժամանակ գրաւուած են թուրքերու կողմէ: Յաւերժութեան տաճարի կեդրոնը, 1.5 մէթր խորութեամբ կայ յաւերժութեան կրակը, որ անմար է եւ կը խորհրդանշէ անմար յիշատակը մեր 1.5 միլիոն զոհերուն:
- գ) Յուշապատը, որուն վրայ արձանագրուած են բոլոր այն շրջաններուն անունները, ուր ցեղասպանութիւն տեղի ունեցած է:

Բոլոր անոնք, որոնք կ'այցելեն Ծիծեռնակաբերդ, կ'այցելեն նաեւ Հայոց Յեղասպանութեան թանգարանը, ուր կան բազմաթիւ վկայութիւններ 1915-ի Յեղասպանութեան մասին:



ԵՐԲ ԷՐ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ԹՈՒՐԲԻՈՅ ՄԷՋ

Մարտ 1919-ին, Հայոց Յեղասպանութիւնը վերապրած արեւմտահայ խումբ մը մտաւորականներու նախաձեռնութեամբ, Պոլսոյ մէջ կը ստեղծուի յատուկ յանձնախումբ մը, որուն գլխաւոր նպատակն էր ձեռնարկներ կազմակերպել Հայոց Յեղասպանութեան զոհերու չորրորդ տարելիցին առիթով:



Այսպէս երգիծաբան Երուանդ Օտեան, Պոլսոյ «Ժամանակ» օրաթերթին մէջ կ'առաջարկէ, որ 1915-ի անմեղ զոհերուն յիշատակին յատուկ օր մը ընդունիլ եւ ոգեկոչել այդ օրը: Իսկ Վաղարշապատի դպրոցներու տեսուչ Վրթանէս Փափագեան նամակով մը կը դիմէ Գէորգ Ե. Ամենայն Հայոց կաթողիկոսին, առաջարկելով 24 Ապրիլը յայտարարել Նահատակներու օր, ի յիշատակ հայ մտաւորականներուն, որոնք 23 Ապրիլ 1915-ի գիշերը ձերբակալուեցան եւ բռնի ուղղուեցան Պոլսոյ Հայտարփաշա կայարանէն դէպի Այաշ, Չանղըրը եւ միւս սպանդանոցները:

Քանի մը օր ետք, կաթողիկոսին դիւանը շրջաբերականով, նաեւ՝ կաթողիկոսական կոնդակով կը հրահանգէ 24 Ապրիլը ընդունիլ իբրեւ Հայոց Յեղասպանութեան զոհերու յիշատակի օր եւ բոլոր եկեղեցիներուն մէջ, այդ օրը մատուցել հոգեհանգստեան պատարագ:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ
ԽՈՐՀՐԴԱՆՇՈՂ ՅՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Աշխարհի մէջ տարբեր տեղեր հայեր կանգնեցուցած են Հայոց Յեղասպանութեան եւ անոր յիշատակին նուիրուած բազմաթիւ յուշարձաններ եւ թանգարաններ:
Յիշենք այդ յուշարձաններէն շարք մը, ժամանակագրական շարքով, սկսելով ամէնէն հինէն մինչեւ մեր օրերունը:

Ամբողջական ցանկը կարելի է ունենալ հետեւելով այս հասցէին.
Ուիքիփետիա Հայոց_Յեղասպանութեան_Յուշարձաններու_Ցանկ

1919-ին, յուշարձան Պոլսոյ մէջ, Թաքսիմ հրապարակ:
1938-ին, յուշարձան-մատուռ, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարան, Անթիլիաս, Լիբանան:
1939-ին, յուշասիւն, Հայ Կաթողիկէ Պատրիարքարան, Պէյրութ, Լիբանան:
1965-ին, յուշակոթող, Կալկաթա, Հնդկաստան:
1965-ին, յուշահամալիր, Մոնթէպէլլօ, Գալիֆորնիա, ԱՄՆ:
1965-ին, Խաչքար-յուշարձան, Էջմիածին, Վաղարշապատ, Հայաստան:
1965-ին, յուշարձան, Ուոթըրթաուն, Մասաչուսեթս, ԱՄՆ:
1966-ին, յուշարձան, Պիքֆայիա, Լիբանան:
1975-ին, յուշարձան, Սուրբ Ներսէս Շնորհալի եկեղեցի, Մոնթէվիտէօ, Ուրուկուէյ:
1987-ին, յուշարձան, Շթութկարթ, Գերմանիա:
1988-ին, յուշատախտակ, Աիւնիոն, Ֆրանսա:
1990-ին, յուշահամալիր, Տէր Զօր, Սուրիա:

Աշխարհի տարբեր երկիրներու մէջ, կառուցուած են եւ կը շարունակուին կառուցուիլ Հայոց Յեղասպանութեան յուշարձաններ: Անոնք ուրիշ բան չեն, եթէ ոչ հայ ժողովուրդի պատմութեան, տառապանքի, դիմադրութեան եւ ուժի խորհրդանիշներ: Ամէն տարի տարբեր ազգի մարդիկ, բայց մասնատրաբար հայեր կ'այցելեն այդ յուշարձանները, հաստատելու թէ երբեք չեն մոռնար 1915-ին Օսմանեան պետութեան կողմէ ծրագրուած ու կազմակերպուած Հայոց Յեղասպանութիւնը, այլ՝ քով-քովի գալով կը զօրանան եւ կը նորոգեն իրենց ուխտը՝ քաջաբար շարունակելու պայքարը մինչեւ Յեղասպանութեան ճանաչում, մինչեւ մեր պատմական հողերու վերադարձ եւ մեր բոլոր իրաւունքներու հատուցում:



Լիբանանի մէջ, Խորէն Ա. Վեհափառին նախաձեռնութեամբ, տեղադրուած է Հայոց Յեղասպանութեան նուիրուած Պիքֆայիայի նահատակաց յուշարձանը: Ան կը գտնուի Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Պիքֆայիայի դպրեվանքի տարածքին:

Յուշարձանի հեղինակն է քանդակագործ Զաւէն Խտըշեան:



Ֆրանսա, մայրաքաղաք Փարիզի կեդրոնը, «Երեւան» պուրակին մէջ կը գտնուի Հայոց Յեղասպանութեան նուիրուած Կոմիտաս Վարդապետի արձանը:

Յուշարձանի բարձրութիւնը 6 մետր է, որուն 2 մետրը պատուանդանն է, իսկ 4 մետրը պրոնզէ արձանը: Յուշարձանի ետեւի մասը խաչքար է:



ԳԻՏԷՐԻ ԹԷ

- Ի՞նչ բանի կ'օգտագործուին Ապրիլ 24-ի առթիւ Ծիծեռնակաբերդի անմար կրակին շուրջ զետեղուած ծաղիկները:

- 2010 թուականէն ետք, ամէն տարի Ապրիլ 24-ի յաջորդող օրերուն Ծիծեռնակաբերդի անմար կրակին շուրջ զետեղուած հարիւր հազարաւոր ծաղիկները կը հաւաքեն եւ անոնց թերթիկները կ'անջատեն ցողուններէն:

Ցօղուններով կը պատրաստեն պարարտանիւթ՝ յուշահամալիրի տարածքին գտնուող հողին համար, իսկ թերթիկներով կը պատրաստեն վերամշակուած թուղթ, որ կ'օգտագործուի Յեղասպանութեան թանգարանին մէջ:

Այսպիսով կը միանան երկու գաղափարներ. մէկը այն է, թէ ծաղիկները կը վերածուին լուռ վկաներու. իսկ միւսը կը վերաբերի շրջակայ միջավայրի պաշտպանման:



ԱՆԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ

Մարդկային հասարակութեան մէջ, անարդարութիւնը միշտ գոյութիւն ունեցած է:

Անարդարութեան բնորոշումն է, թէ երբ մարդիկ կամ խումբեր կը գրկուին իրենց հիմնական իրաւունքներէն կամ չեն ստանար այնինչը, որուն արժանի են: Անարդարութիւնը կը դրսեւորուի տարբեր ձեւերով՝ ընկերական, տնտեսական, քաղաքական կամ մշակութային ոլորտներուն մէջ:

Անարդարութենէն կը բխի անհաւասարութիւնը, որ կրնայ հիասթափութիւն, բողոք կամ դիմադրութիւն յառաջացնել:

Պատմութեան ընթացքին ամէն տեղ անհաւասարութեան դէմ պայքարը եղած է վճռորոշ հարց, անհատներու եւ խումբերու համար: Իսկ արդարութիւնը դարձած է հասարակական փոփոխութիւններու հիմք:



ՀՕՄ-ի Թորոնթոյի Ամէնօրեայ վարժարանի, Գոլուեան նախակրթարանի 4-րդ կարգի աշակերտները, իրենց հայերէնի ուսուցչուհի տիկին Ռիթա Գուլաճեանի հետ, կ'անդրադառնան 24 Ապրիլ 1915-ի մասին:



Ապրիլ 24-ին թուրքերը հայերուն վրայ յարձակեցան եւ զիրենք տուներէն հանեցին: Անոնց անապատին մէջ քալեցնելով չարչարեցին, անօթի ձգեցին եւ մաս մըն ալ սպաննեցին:

Թուրքերը փորձեցին միայն մէկ հայ ձգել աշխարհի վրայ, որ թանգարան դնեն. բայց չկրցան:

Հայերը կան ու կը մնան:

Ժպիտ Շահպազեան

Ապրիլ 24-ը օր մըն է, երբ կը յիշենք մէկուկէս միլիոն հայերը, որոնք ջարդուած են այդ օրը:

Ամէն տարի, Ապրիլ 24-ին հայեր կը հաւաքուին եւ ծաղիկ կը դնեն յուշարձանին քով, որ յիշեն նահատակուած հայերը:

Ապրիլ 24-ի գիշերը թուրքերը մեծ ու պզտիկ ձերբակալեցին ու սպաննեցին:

Պէտք է հայրենիք վերադառնանք, հողերը ետ առնենք եւ ազատ ու անկախ ապրինք:

Գարին Աշքը

Ապրիլ 24-ին թուրքերը ջարդեցին հայերը եւ մարդոց տուներէն դուրս հանեցին:

Ամէն տարի, Ապրիլ 24-ին հայեր յուշարձանին շուրջ ծաղիկներ կը դնեն, եկեղեցի կ'երթան եւ Հայր Սուրբը կ'օրհնէ: Հայկական դպրոցները կը գոցեն Ապրիլ 24-ին: Ես միշտ պիտի յիշեմ մեռնող զինուորները եւ ժողովուրդը: Ես հայ պիտի մնամ: Թուրքերը քանդեցին մեր եկեղեցիները, ես պիտի պաշտպանեմ իմ երկիրս: Ես հպարտ եմ, որ հայ եմ եւ հայ պիտի մնամ:

Քնար Թորոսեան

Ապրիլ 24-ին թուրքերը յարձակեցան հայերուն վրայ եւ ուզեցին ջարդել, որ ոչ մէկ հայ մնայ աշխարհի վրայ: Ամէն տարի բոլոր հայերը եկեղեցիներուն եւ դպրոցներուն դիմաց կը հաւաքուին եւ ծաղիկներ կը զետեղեն մեր զոհերուն յիշատակին: Ամէն տարի, Ապրիլ 24-ին բոլոր հայկական դպրոցները կը փակուին, յիշելու համար 1915-ի Մեծ Եղեռնը: Ես ալ ամէն տարի Ապրիլ 24-ին եկեղեցի կ'երթամ, մոմ կը վառեմ եւ կ'աղօթեմ հայրենիքիս համար, որ մնայ ազատ, անկախ եւ ուրախ:

Մենք միշտ պէտք է յիշենք մեր գրաւուած հողերը եւ պէտք է պահանջենք թուրքերէն:

Ալեքս Վէզիրեան

Ապրիլ 24-ին թուրքերը յարձակեցան հայերուն վրայ: Մարդոց հանեցին իրենց տուներէն եւ չարչարեցին զանոնք: Ապրիլ 24-ի գիշերը թուրքերը ձերբակալեցին շատ մարդիկ եւ սպաննեցին: Օրինակ՝ բժիշկներ, գիրք գրողներ եւ շատ ուրիշներ, օրինակ՝ Գրիգոր Զոհրապ, Սիամանթօ, Դանիէլ Վարուժան եւ ուրիշներ, ջարդեցին 1.5 միլիոն հայեր:

Մենք ամէն երկրի մէջ յուշարձան ունինք, ինչպէս նաեւ մեր Կեդրոնին մուտքին եւ ամէն տարի ծաղիկ կը դնենք՝ յիշելու մեր նահատակները:

Մենք կրնանք Հայաստանը պաշտպանել հայկական մշակոյթը պահելով:

Արիա Գուլաճեան

1915 թուականի Ապրիլ 24-ին թուրքերը տուներէն հանեցին ամէն ուսեալ եւ խելացի մարդիկը եւ սպաննեցին: Այդ գիշեր տուներէն հանեցին հայերը եւ ըսին, որ պիտի փոխադրեն նոր երկիր մը, բայց ճամբան սպաննեցին զանոնք: Այսօր դեռ կը յիշենք մեր նահատակները եւ ամէն տարի յուշարձանին քով ծաղիկներ կը զետեղենք:

Պէտք է հայերէն խօսինք, հայերէն գրենք եւ մեր մշակոյթը պահենք, որովհետեւ մենք հայ ենք:

Արենի Գուճանեան

1.5 միլիոն հայեր զոհուեցան, որ մեր հայրենիքը պաշտպանեն: Թուրքերը մարդիկը իրենց տուներէն դուրս հանեցին եւ խոստացան, որ իրենց ուրիշ երկիր պիտի տանին, բայց ճամբան սպաննեցին: Ապրիլ 24-ի գիշերը, բռնեցին Սիամանթօն եւ ուրիշ գրողներ, բանտարկեցին եւ սպաննեցին:

Մենք մինչեւ այսօր Ծիծեռնակաբերդի մէջ ծաղիկներ կը դնենք:

Մի քանի բան կայ, որ կ'ուզեմ ըսել մեր հայրենիքին մասին, մենք միշտ պէտք է մեր ազգը պահենք, հայերէն խօսինք եւ շատ ուրիշ բաներ ընենք:

Ծիրանէ Սարգիսեան

1915 թուականի Ապրիլ 24-ին թուրքերը Հայաստանի վրայ յարձակեցան: Անոնք կ'ուզէին Հայաստանը գրաւել: Բոլոր կամաւորները կոռուեցան եւ նահատակուեցան, որ մենք հայ մնանք: Թուրքերը 1.5 միլիոն հայ սպաննեցին, բայց մենք միշտ պիտի յիշենք Ապրիլ 24-ը եւ պաշտպանենք Հայաստանը:

Մենք ամէն Ապրիլ 24-ի կ'երթանք մեր ակումբը եւ յուշարձանին շուրջ ծաղիկներ կը դնենք, որ յիշենք Ապրիլ 24-ը: Ծիծեռնակաբերդը կը գտնուի Երեւան քաղաքին մէջ: Ծիծեռնակաբերդի կրակին շուրջ ծաղիկներ կը դնենք:

Մենք դեռ քրիստոնեայ եւ հայ ենք, որովհետեւ մենք կոռուեցանք Հայաստանի համար: Ես պիտի պաշտպանեմ իմ հայրենիքս:

Մարկ Մովէլ

Ապրիլ 24-ին 1.5 միլիոն ժողովուրդ նահատակուեցաւ, եւ ես շարադրութիւն պիտի գրեմ, թէ ինչպէս սկսաւ: Ապրիլ 24, 1915-ին պատերազմ մը կար հայերուն եւ թուրքերուն միջեւ: Գիշերը բռնեցին Սիամանթօն, Գրիգոր Զոհրապը եւ միւս գրողները, բանտ դրին եւ յետոյ սպաննեցին: Թուրքերը հայերուն կը տանէին, ճամբան կը ձգէին կամ կը ջարդէին:

Ես կը կարծեմ, որ եթէ հայերէն խօսինք, գրենք, կարդանք, մեր ազգը եւ մշակոյթը կրնանք պահել, մեր երկիրը կը մնայ ու կը գոյատեւէ:

Արի Շարապիսեան

Ապրիլ 24, 1915-ին թուրքերը շատ հայեր մեռցուցին: Մեռցուցին շատ բժիշկներ, գրողներ, օրինակ՝ Սիամանթօն: Հայաստանի մէջ յուշարձան կայ, որ կը կոչուի Ծիծեռնակաբերդ: Մարդիկ հոն կ'երթան եւ կրակին շուրջ ծաղիկներ կը դնեն, որ յիշեն հայ նահատակ զինուորները:

Մինչեւ այսօր այդ կրակը միշտ կը վառի, եւ Ապրիլ 24-ի օրը մարդիկ դեռ կ'երթան եւ ծաղիկներ կը դնեն հոն:

Գարմէն Գիրիճեան

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ԱՆԿԻՆ



Շարժապատկեր՝ «ԿԵԱՆՔ ԵՒ ԿՈՒՒՒ»
«ԿԵԱՆՔ ԵՒ ԿՈՒՒՒ» Ֆիլմի բեմադրիչն է Միեր Մկրտչեան։ Այս շարժապատկերը նուիրուած է Արցախի հերոսներուն եւ Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 25-ամեակին։


«ԿԵԱՆՔ ԵՒ ԿՈՒՒՒ» ժապաւնով բեմադրիչը կ'անդրադառնայ մարդային արժէքներու, ընկերութեան, սիրոյ եւ հայրենասիրութեան մասին։

Բաղդատական մը կատարելով հայկական ուրիշ ֆիլմերու հետ, կարելի է ըսել, թէ այս ֆիլմի պատրաստութիւնը, նկարահանումը, դերասանները, անոնց խաղարկութիւնը, երաժշտութիւնը եւ նիւթը շատ իրայատուկ են եւ գրաւիչ։ Հոն արձանագրուած են մեր պատմութիւնը, մեր նուիրումը հայրենի հողին, մեր յաղթանակները, նաեւ մեր դժուարութիւններն ու մեր ցաւերը։



Երգ՝ «ԱՊՐԵԼՈՒ ԱՊՐԻԼ»

Անուշի եւ Ինկայի այս երգով կը շեշտուի հայ ազգի կամքն ու ոգին։ Տարբեր սերունդներու պատմութիւններ մէջբերելով, այս երգը կու գայ յիշեցնելու, թէ ցեղասպանութեան ցաւը մնայուն է, բայց կարելի է յոյս եւ ուժ գտնել վերապրումի ընդմէջէն։



ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

Հորիզոն Մանկապատանեկանի խմբագրութիւնը շատ շահեկան հարցազրոյց մը ունեցաւ «Ընծուղտն ու իր հասակը» գիրքի պատանի հեղինակներուն՝ Առլի Քելլէեանի եւ Վանա Գարայեանի հետ։

Հ.-Խնդրեմ ամփոփ ձեռով ներկայացուցէք դուք ձեզ մեր սիրելի ընթերցողներուն։

Առլի – Ես Առլի Քելլէեանն եմ։ Սուրբ Յակոբ Ազգային վարժարանը կը յաճախեմ եւ 11-րդ դասարան եմ։ Կը սիրեմ գիրք կարդալ եւ ֆիլմեր դիտել։ ԳԵՄ-ական եմ եւ կը սիրեմ իմ մասնակցութիւնս բերել ԳԵՄ-ի աշխատանքներուն։

Վանա – Անունս Վանա Գարայեան է։ Ես ալ Սուրբ Յակոբ Ազգային Վարժարանի 11-րդ դասարանի աշակերտուիի եմ։ Ես ալ Առլիին պէս, շատ կը սիրեմ գիրք կարդալ, կը սիրեմ նաեւ ոտնագնդակ խաղալ։ ԳԵՄ-ական եմ եւ Համազգայինի «Անի» պարախումբի անդամ։

Հ.- Այս գեղեցիկ գիրքը դպրոցի կրթական նախագիծին հետ կ'առնչուի՞, թէ բոլորովին անհատական նախաձեռնութիւն է։

Առլի – Entrepreneuriat-ի ուսուցչուիին մեզմէ եւ մեր դասընկերներէն խնդրեց, որ ներկայացնենք ծրագիր մը, առանց նշանակելու կամ սահմանելու այդ ծրագիրը։ Վանան եւ ես միասին ունեցանք գիրք մը հրատարակելու գաղափարը, միասին գրեցինք եւ ես գծեցի։

Վանա – Entrepreneuriat-ի ուսուցչուիին խնդրեց, որ աշակերտները բաժնուին խումբերու եւ իրաքանչիւր խումբ ընտրէ յաջող, եկամտաբեր եւ իրայատուկ ծրագիր մը ու ներկայացնէ զայն դասարանէն ներս։ Միասին գրեցինք. նկարներու գծագրութեան օգտագործեցինք դպրոցի iP-ad-ներու վրայ մեզի տրամադրուած App-ը։

Հ.- Հոյակապ։ Ինչո՞ւ ձեր ծրագիրը եղաւ գիրքի մը հրատարակութիւնը։ Ինչ բանն է, որ մղեց ձեզի պատրաստելու զայն։

Առլի – Մտածեցինք, թէ ինչը կրնայ իրայատուկ ըլլալ եւ իր նմանը չունենալ. եւ ունեցանք այս գաղափարը՝ հրատարակել փոքրիկներու յատուկ գիրք մը, որ միաժամանակ գունազարդման գիրք է։ Վստահ էինք, թէ մեծ թիւով փոքրիկներ պիտի սիրեն եւ պիտի ուզեն ունենալ։

Հ.- Ինչ են ձեր գալիք օրերու ծրագիրները։ Կը մտածէ՞ք դարձեալ միասին ուրիշ գիրք մը հրապարակել։

Վանա – Մենք արդէն յաջորդ գիրքի հրատարակման աշխատանքին մէջ ենք։ Այս մէկը սակայն պիտի ըլլայ ֆրանսերէն լեզուով։ Տեսնենք, թէ որքանո՞վ տարածում պիտի ունենայ։ Կ'ուզեմ նշել, թէ այս ծրագրին դասանիւթը ֆրանսերէնով է, եւ փորձ մը կ'ուզենք կատարել ֆրանսերէն լեզուով պատրաստելու ու տեսնելու, թէ հայերէն գիրքին նման յաջողութիւն պիտի ունենայ, թէ ոչ։ Եթէ սպասուած յաջողութիւնը ունենանք, կրնանք ուրիշ գիրքեր ալ պատրաստել ամրան։

Հ.- Իսկ ձեր յաջորդ գիրքի նիւթը ի՞նչ պիտի ըլլայ։ Կ'ուզէ՞ք խօսիլ անոր մասին եւս։

Առլի – Ամէն գիրք, զոր կը գրենք պատգամ մը ունի իր մէջ։ «Ընծուղտն ու իր հասակը» գիրքով կու գանք փոքրիկներուն ըսելու, թէ ամէն մարդ իրայատուկ է իր տեսակին մէջ։ Իսկ մեր յաջորդ գիրքին նիւթը անձնասէր չըլլալու մասին է. փոքրիկներուն կ'ուզենք փոխանցել բաժնեկցելու (share) գաղափարը։




Հ.- Ինչ կ'ուզէք փոխանցել մեր ընթերցողներուն։

Առլի – Կարդանք, խօսինք եւ սորվինք հայերէն։ Այս է մեր պատգամը եւ նոյն այս տողը դրած ենք մեր «Ընծուղտն ու իր հասակը» գիրքի 4-րդ կողքին վրայ։

Հ.- Ինչպէս կարելի է ունենալ այս գիրքէն օրինակներ։

Առլի եւ Վանա – Կարելի է դիմել մեր Instagram-ի էջին՝ creation_dzidzagh



Մանկապատանեկան Հորիզոնը կը հովանաւորեն ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութիւնը եւ Գանատայի շրջանի իր 10 մասնաճիւղերը

Հեռաձայն (514) 332-3757

Email: sylvia@horizonweekly.ca

Խմբագրութիւն՝ Անահիտ Պալեանի
Թիւր պատրաստեց Թալիա Ճապրայեան
Ձեւալղացք՝ Լորի Խաչերեանի